

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով:

Քիթիլիտում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուր է կանոնադրութիւնը. Պարտաւորիչ տարրական ուսում.—Ներքին ՏԵՍՏԱԿՈՒԹԻՒՆ. Գործողական կեանքից. Անհիմն վրդովմունք. Նամակ Պետրոսիկից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԱԿՈՒԹԻՒՆ. Զուսպասանի ֆինանսները. Պարսկահայերի կեանքից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղացու անտեսական վիճակը:

ՈՒՐ Է ԿԱՆՕՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մենք արդէն նկատեցինք անցեալ անգամ, որ Ներսիսեան դպրոցի տեսչի ընտրութիւնը անկասկած է:

Պնդում ենք մեր ասածի վրա: Եւ պնդում ենք այն պատճառով, որ այդ դպրոցի հին հոգաբարձուներից ընդամենը 3 հոգի իրանց թոյլ տուեցին ամբողջ հասարակութեան առաջ, պաշտօնական կերպով, խախտել Ներսիսեան դպրոցի կանոնադրութիւնը, որը ամենայն սրբութեամբ պահպանված է աւելի քան 40 տարի:

Ներսիսեան դպրոցի կանոնադրութիւնն ասում է.

Յօդ. 10. Հոգաբարձութիւնն դպրոցին ընդ նախագահութեամբ լինական առաջնորդին կ'ազմէ յերկուսուսան անդամաց:

Յօդ. 11. Տեսուչ դպրոցին ընտրի ի հոգաբարձութիւնէ:

Յօդ. 17. Ի հոգաբարձութեան քննին և վճռին ամենայն խնդրից և գործից ըստ ուսումնականին և անտեսականին առաւելութեամբ, ձայնից, և դրին յօրադրի ընդ ստորագրութեամբ ներկայ գտեալ անդամաց, որոց թիւը չիցէ պակաս քան զկէսն:

Այդ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը օգուտ քաղելով կանոնադրութեան իրան տուած իրաւունքից, այն է տեսուչ ընտրելով համարձակվել է խախտել նոյն կանոնադրութեան 17-րդ յօդուածը, որը պարզ ասում է, թէ նիստին ներկայ զըստվող անդամների թիւը կէսից պակաս չը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒԼԱՅՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ամարային դպրոցական արձակուրդի միջոցին ինձ պատահեց լինել կարսի նահանգի մի քանի հայաբնակ գիւղերում: Գիւղացու անտեսական դրութիւնը ամեն տեղ շատ ողբալի է և եթէ այս տարվայ հունձն էլ անբաւարար լինի, այն ժամանակ գիւղացին բոլորովին կը ոչնչանայ: Անցեալ յունիս ամսին երաշտութիւնը մի քանի տեղ սարսափահար արեց գիւղացուն, սակայն վերջերս տեղացող յորդ անձնեկը բաւականին յոյս ներշնչեցին թշուառ գիւղացու սրտում: Եւ պատահեց գիւղերում երաշտութեան ժամանակ, երբ արևի տաքը կիզում էր արդէն դեղնել սկսած արտերը: Գիւղացու ամբարը վաղուց ի վեր աւելած էր, նրանց մեծ մասը ստիպված էր գիւղ և քաղաք թափառել և նոյն իսկ 5—10 ֆունտանոց սոսորդներով ալիւր ձարել, իրանց սոված տանջ փորելիներին քաղցը յաղեցնելու համար: Շատ անգամ անպիտան հաց էին գործածում, որ միայն հացի նմանութիւն էր բերում, գարի միւլերի հետ խառնելով էր թեփի և նոյն իսկ մի քանի տեսակ արմատներ, որոնք ծառայում էին միայն հացի քանակութիւնը շատացնելու համար: Անբաւարար կերակրից ուժասպառ եղած, ապագայի վրա դրած յոյսի նշույն ևս չիշած, գիւղացիները չըմում էին որպէս աւատ մատնի, որ

պէտք է լինի, այն է ոչ պակաս քան 6 հոգի:

Ուր է այդ 6 հոգին: Ամսիս 3-ին կայացած նիստում ներկայ էին միայն 3 հոգաբարձու (Արզար Յովհաննիսեան, Յակոբ Տէր-Յովհաննիսեան և Գեորգ Աբրեմեան): Ներկայ եղող չորրորդ հոգաբարձուն, Միքայէլ Թամաշեան, տեղիւ տեղը բողբոջեց, որ այդքան հոգով նիստը կանոնաւոր չէ կարելի համարել և հրաժարվեց մասնակցել տեսչի ընտրութեան: Եւ այդ 3 հոգաբարձուն, նախագահի հետ միասին, իրանց թոյլ տուեցին ձեռնարկել տեսչի ընտրութեան:

Ներսիսեան դպրոցի հին հոգաբարձուները քաղաքացիական քաջութիւն չունեցան խոնարհաբար յայտնելու Վեհափառ կաթողիկոսին, որ նոր տեսչի ընտրութիւնը թողնելի նոր հոգաբարձութեան: Մեզ գուցէ կասին.—ինքը Վեհափառն է կոնդակով կարգադրել, որ հին հոգաբարձութիւնը ընտրութիւն անի: Շատ լաւ: Բայց միթէ յարգանքի զգայունքի և համեստութեան հաղաւթ է դիմել նոյն Վեհափառին, և խոնարհաբար խնդրել, որ նա յետաձգի իր այս կամ այն որոշումը: Եթէ կարելի է դիմել նոյն կաթողիկոսին և խնդրել, որ նա յետաձգի հոգաբարձական ընտրութիւնը, ինչպէս այդ արեւելիս Արզար Յովհաննիսեան և մի քանի անձինք, ինչու չէր կարելի դիմել և խնդրել, որ յետաձգվի տեսչի ընտրութիւնը:

Սակայն ընդունեց մի բայ, որ անպատճառ պէտք է այժմ կայանար տեսչի ընտրութիւն: Բայց միթէ այդ նշանակում է, որ տեսչի ընտրութիւնը պէտք է կայանար ապօրինի կերպով, կանոնադրութեանը խախտելով: Միթէ անկարելի բան էր յետաձգել նիստը երկու—երեք օրով, որ ժողով նշանակել և ընտրութիւն կատարել կանոնաւոր ժողովով, երբ ներկայ կը լինէին գէթ 6 հոգաբարձու:

Բայց ոչ.—հարկաւոր էր սին եկեղերս ստեղծել, անպատճառ տեղ տալ Սեդրակ Մանգինեանին, և այդ նպատակին հասնելու

պէս ստուերներ: Նրանց դէմքի վրա պատկերացած էր վատութիւնը:

Ձինջ երկնակամարի վրա վերջապէս երեաց մի փոքրիկ ամպ, որ հետզհետէ մեծանալով՝ գրաւեց երկնքի մի մասը, դիւղացին կանքի և մահալան տաքնալի մէջ յառում էր իր աչքերը դէպի վեր, ձեռքերը աղօթելու ձևով տարածում էր, նրա շրթունքները աղօթելու ձևով մրմնջում: Նրա հայեացքը մէջ բովանդակվում էին նրան տանջող բոլոր մտքերը.—և երկնք, և յոյս: Անձ վերջապէս չէր առ չէր սկսում և կաթկաթել երկնքի ցողը, գիւղացին ուշք չէ դարձնում, որ անձինք յորդացան և թրջում է իր հագուստը, նա ասանց իր զէրքը փոխելու, առանց չարմիւր, որպէս մի արձան, կանգնած է փողոցի մէջտեղ, նոյն պատահական հայեացքով, նոյնպէս բաղկատարած... Եւ կարծում էր, որ եթէ հնուա նկարիչները մէկը կամենար ներկայանալ աղօթողի անպարտէս նրանից լաւ սիւն էր կարող գտնել իր վրձինի համար:

Գիւղացին այնքան ուժասպառ է եղել, որ նա բարեկեցութեան, երջանիկ օրերի մասին մտածել անգամ զգուշացնում է. այսօր նրա հոգածութեան առարկան է միայն մի պատառ ցամաք հաց ձարել իր փորելիներին, իր ընտանիքի համար: Մի քանի տարի յաջորդաբար տեղ անբերելութիւնը արդէն հիմնովին խանգարել է գիւղացու անտեսական վիճակը: Նա դարձել է գիւղացի և քաղաքացի վախճառու յաւիտեական ստրուկ: Կանցնեն տարիներ, գիւղացու տարեկան արեւն քրտնալի վառասկզ յարատւ հոսանքով մուտք կը գործէ վախճառուի գրպանը,

համար, մեր եզրիւնները, ինչպէս միշտ, ոտի տակ տուեցին և ամօթ, և կանոնադրութիւն, և պատկառանք:

Սակայն մենք ուզում ենք մի անգամ էլ կարծել, որ լքմիածնում այդ անկանոն, ապօրինի ընտրութիւնը հաստատութեան չի արժանանայ:

Մենք կարծում ենք վերջապէս, որ նոյն իսկ Սեդրակ Մանգինեան, այնքան քաջութիւն և պատիւ կունենայ, որ կը մերժի ընդունել տեսչի պաշտօնը՝ 3 հոգաբարձուի ձեռքից...

ՊԱՐՏԱՆՈՐԶ ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ

Մայրաքաղաքի «С.-Петербург. Вѣдомости» լրագրի մէջ տպված է մի շատ նշանաւոր լուր. լրագրի մի քանի մանրամասնութիւններ է հաղորդում պարտաւորիչ տարրական ուսման այն նախագիծ մասին, որ մշակվում է ժողովրդական լուսաւորութեան միւնիստրութեան մէջ:

Կեռ 1890 թուականից սկսած միւնիստրութիւնը սկսեց անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքել և այդ նպատակով մի քանի մարդիկ ուղարկեց Ֆրանսիա, Շվեյցարիա և մի քանի ուրիշ երկրներ, տարրական ուսման գործը այդ տեղերում ուսումնասիրելու նպատակով: Այդ ձանապարհով ձեռք բերած և հաւաքած փաստերն ու նիւթերը մանրամասն ուսումնասիրութեան և մշակութեան նիւթերից յետոյ, կազմվեց պարտաւորիչ տարրական ուսումնական միւնիստրութիւնը դիւն չէ վստահանում իր նախագիծը իրագործել ամբողջ Ռուսաստանում, այլ կամենում է փորձ անել և այդ նպատակով, վերջիշեալ լրագրի խօսքով, ընտրել է հետեւեալ չորս նահանգները՝ Սարգիսի, Պոլտավայի, Կուրսկի և Վորոնեժի: Լրագրի հաղորդում է, որ ներկայումս վերջիշեալ չորս նահանգների տարրական դպրոցների դիրեկտորները կանչված են Պետերբուրգ՝ այդ հարցին վերաբերեալ նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու համար: Պարտաւորիչ

ուսումնական միջոցներ փորձական նախագիծը պարտաւորիչ լինի աշխարհ, որը և վերջնականապէս կը մշակվի և քննութեան կենթարկվի Սարգիսի և Կիւրսկի հոգաբարձուների մասնակցութեամբ, որոնք այդ նրապատակով աշխարհ Պետերբուրգ կը գնան: Կարծում են, որ պարտաւորիչ ուսումնական միջոցներ փորձը կը սկսվի իրագործվել հետեւեալ 1895 թվ աշնանից:

Այդ տեղեկութիւնը, ասում է «Русскія Вѣдомости» լրագիրը, շատ մեծ նշանակութիւն ունի և լուրջ ուղղութեան արժանի է: Տարրական դպրոցը մեծ ազդեցութիւն ունի ժողովրդական կեանքի ընթացքի վրա, և այդ պատճառով նրա զարգացման համար արած իւրաքանչիւր քայլը ժամանակիս ամենաեական պահանջներից մէկն է:

Ռուսաստանում պարտաւորիչ տարրական ուսումնական միջոցներ զարգացնելու դեռ վաղուց է եղել բայց զանազան հանգամանքների պատճառով, չէ կարողացել իրագործվել: Բայց այժմ, երբ ժողովրդական դպրոցի գործը բաւական զարգացել է առաջ է գնացել Ռուսաստանում, այդ հարցը, այսպէս ասած, հասուցանել է իրական է, որ պէտք է ասպարէզ դար պարտաւորիչ ուսման հարցը, որպէս հետեւեալ զարգացման գործի զարգացման: Եւ ահա միւնիստրութիւնը իր նոր նախագիծով բաւարարութիւն է տալի ժողովրդի այդ եական պահանջին:

Սակայն միւնիստրութեան նախագիծ մասին հաղորդված տեղեկութիւնը բաւական մանրամասն չէ: Ի նկատի ունենալով, որ պարտաւորիչ ուսման հարցը ժողովրդի կեանքի զարգացման նպատակով ամենաանհրաժեշտ խնդիրներից մէկն է, ցանկալի կը լինէր, որ նախագիծը, երբ էլ ցանկալի կը լինէր, որ նախագիծը թէ մասնակի և թէ մասնադէտ մանկավարժների լուրջ քննադատութեամբ: Հաւանական դէպքում, հասարակական և ժողովրդական մեծ նշանակութիւն ունեցող մի այդպիսի գործի իրագործումը, առանց լուրջ և բազմակողմանի քննադատութեան, կը լինէր անկատար և ցանկալի նպատակին չէր հասնի:

Դրութեան պատճառով զրկված է ապրուստի այդ օժանդակ միջոցից: Նրա կողմը այլ ևս կաթ չեն տալիս և ընտանիքը ստիպված է մի ակամայ, երկարատեւ պատ պահել, նոյն պատը չարանակվելու է և ամբողջ ձմեռ, որովհետեւ իւր ու պանիր չը կայ...

Հասա հունձը՝ գիւղացու տաճանակիր աշխատանքի ժամանակը, երբ նա օրվայ մեծ մասը գործի է, քրտնալի ծլում է նրա ձակաւայ, ձեռքերը անդադար աշխատում են, սակայն իր ֆիզիկական ուժի կորուստը վերականգնելու, իր խոնջած, յոգնատանջ մարմնը կաղաւթելու համար իր պապական կանաչաւորից ևս զրկված է այսօր և ստիպված է բաւականանալ լոկ չոր հացով: Եւ այս եղիպտական տանջանքը, այս միկվիլը արեւի բոցակէզ ճառագայթների տակ, ամեն ինչից թէ իրան և թէ իրաններին դրկելը ինչ նպատակ ունի,—նա աշխատում է միմյան վախճառուի համար, որը իր տանը նստած սովորներ է բարձրում:

Այսօր մանաւանդ աւելի անտանելի է գիւղացու վիճակը.—հացը դեռ հասած չէ, այժմ գիւղացին հաց չունի ուտելու, անհրաժեշտ կարիքը ստիպում է նրան գիւղից գիւղ թափառել, քաղաք գնալ և որպիսի և ից պայմանով հաց ձարել. գիւղացին մշտապէս անհեռատեւ է պայմաններ կապելի, իսկ այսօր նա ոչ հրմաններ կապելի, ունի մտածել անհեռատեւ և ձեռնուտ պայմանների մասին, նրան հաց է հարկաւոր քաղցած չը մոռնելու համար, մինչև որ նոր հունձը կտալի: Քաղցի բարձրաբարձու պահանջի առաջ խոնարհվում են

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Չը նայելով որ օգոստոսը սկսված է և առաջիկայ ուսումնական տարվայ մէջ մեծ կարիք պէտք է զգացվի արտօնաբեր ուսուցիչներին, այնու ամենայնիւ, մեր դպրոցական վարչութիւնները, սակաւ բացառութեամբ, դեռ արձակուրդի հանգիստն են վայելում: Հակառակ ընդհանուրի ցանկութեան, հակառակ դպրոցական շահերի՝ մեր ուսուցչական խմբերը տարուց տարի աւելի չարժու են դառնում. մասով կարելի է ցոյց տալ այն դպրոցը, որի մէջ ուսուցիչները անխորտակ մնան երկրորդ տարին: Այդպիսով դպրոցական դրօշը ահագին վնասներ է կրում, որովհետեւ իւրաքանչիւր տարի նորանոր ուսուցիչներ են գալիս, մինչև սրանք ծանօթանում են իրանց նախորդի դասաւարտութեան եղանակին, մինչև ծանօթանում են աշակերտներին հետ, վերջանում է ուսումնական տարին և ուսուցիչը ստիպված է այդտեղից էլ տեղափոխվի մի այլ տեղ: Ուսուցիչն էս, ըստ մեծի մասին, վտանգ չը լինելով, որ մի տարուց աւելի պէտք է մնայ, վարում է կարծէք ճանապարհորդի կեանք, որը որոշ ժամանակով իջնան է մի քաղաքում. նա չէ կարող, ինչպէս պէտք է, նուիրվել գործին և դրա համար մեր դպրոցները թէև ծրարով միանման են, բայց փորձեցէք համեմատել մի դպրոց կամ դպրոցական բաժանմունքը մի այլ նոյնանման դպրոցի, բաժանմունքի հետ և դուք ահագին տարբերութիւն կը գտնէք:

Մեր դպրոցական վարչութիւնները բոլորովին անհոգ են վարորդը խումբ կազմելու կը դայ օգոստոսի 15-ը և մեր հոգաբարձուները կը զարթնեն քնից և կորցրած ժամանակը վատախելու համար կը սկսեն հեռագրով ուսուցիչներ հրաւիրել: Եւ այդ դանդաղութեան պատճառով մեր աղքատիկ դպրոցներին եւեւով մատենում դուք տարեկան 20—30 բուրլի աւելորդ ծախք էք դառնում հեռագրի: Ուսուցչական խմբի ընտրութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել, քանի որ հոգաբարձուները ոչ ժամանակ և ոչ հնար են ունենում իրանց հրաւիրած ուսուցիչներին մասին հարկաւոր տեղեկութիւններն ունենալու:

Եւ այդպիսով մեր դպրոցները մօտենում են իրանց անկմանը: Գրան ոչ սակաւ նպաստում է և այն հանգամանքը, որ մեր դպրոցական վարչութեան մէջ ևս ոչ արժանաւորի դնաճատութիւն կայ և ոչ անարժանի պատիւ: Երեւոյնցէք, օրինակ, մի աւագ ուսուցիչ, որը իր մի քանի անպատաւար արարքներով արդէն արտաքսվել էր այս և այն դպրոցից, նրան տեղափոխում են մի այլ դպրոց:

ամեն տեսակ կշռադատութիւններ և գիւղացիներ վերցնում է հացը անեղեկայելի պայմաններով: Բերան գիւղում, որի բնակիչները հուշակված են որպէս ամենահարուստները նահանգում, պատմեցին, որ տեղական հարուստները փոխարինաբար հաց են ցրվել այն պայմանով, որ կարցին հացը վերադարձնեն կօղին կէս կօղ վերադրով, իսկ մի ուրիշը նոյն իսկ կօղին մի կօղ վերադրով է տալիս: Եւ նոյն տոկոսն են վերցնում թէ երեք, թէ երկու և մէկ ամսվայ և թէ նոյն իսկ մի շաբաթվայ համար: Նոյն տոկոսն են առնում թէկուզ գիւղացին հետեւել օրը վերադարձնէր փոխարինաբար վերցրած հացը: Թող մասնագէտները հաշուեն, թէ քանի տոկոս են վերցնում այդ տեղաւորները...

Կարիքի ժամանակ է նկատվում մարդկանց հոգեկան լաւ և վատ կողմերը: Գիւղացու անել վիճակը ունենորներին դարձրել է բորենիներ, որոնց խորհը, որ արդէն իսկ բլծացած էր, իսպառ դադարել է խայթելուց և նրանք օր ցերեկով անօդանականներին յօշոտում են: Փորձեցէք մեղադրել դրանց՝ իրանց անխղճութեան համար և դուք զեռ կը լսէք նրանց կողմից տարօրինակ, հրէշաւոր տրամաբանութիւններ: Ունեորները կարծում են, որ իրանց արածը բարեգործութիւն է. նրանց կարծիքով, որպէս և իցէ տոկոսով գիւղացուն ցանելու հաց տալն ևս բարիք է, հակառակ դէպքում շնորհի հերկերը սև կը մնային, —ասում են նրանք: Նոյն մեղադրանքը արեցին ինձ, Ղարաղալ գիւղի աւետարանական անուն կրող, բայց հակաաւետարանական վարմունքով արդէն յայտնի հարուստները, երբ ևս ՎՄՊ-

Տեղափոխութիւնը միտք ունի միայն այն դէպքում, եթէ աւագ ուսուցչի հետ պատահած ինցիդէնտը, եթէ կարելի է այսպէս ասել, տեղական բնաւորութիւն ունի. իսկ եթէ, ընդհանրապէս, թերութիւնը անձնաւորութեան բնաւորութեան մէջ է, այն ժամանակ, իսկ թիւի համար այդպիսիներին պահելը նշանակում է մի սրբազան հիմնարկութեան օգուտից դերադաս համարել մի անձի, մի անհատի օգուտը, որին այս կամ այն օրտացաւ բարեկամ կամենում է օգնել... հասարակութեան զբաղմունք: Ու՛մ յայտնի չէ, որ մի խումբ և այն ևս մեր ուսուցչական խմբերի նման դիտարկվեցին այն անվարժ խումբ ղեկավարելու համար, աւագ ուսուցիչը, բացի մանկավարժական հմտութիւնից, պէտք է ունենայ և վարչական շնորք, ընդունակութիւն, որ ձեռք է բերվում փորձառութեամբ:

Այն ինչ պետական դպրոցներում նորաւարտ ուսուցիչը օգնական-ուսուցչի և ուսուցչի պաշտօններում երկրորդ տարիներ ծառայելուց յետոյ միայն արժանանում է տեղի պաշտօնին, մեղաւորում, ընդհանրապէս, պակաս չեն օրինակներ, որ աշակերտական նստարանից ուղղակի թուշում, բաղմունք են աւագ ուսուցչի, մանկավարժական ժողովի նախագահի արժուի վրա և որպէս անփորձ, կեանքին անտեղեկ մարդիկ, գուցէ նոյն իսկ ակամայից՝ պատճառ են դառնում խռովութիւնների, դանդաղների: Շատ անգամ անպատիժ է մտնում աւագ ուսուցիչը, շատ անգամ և կրտսեր ուսուցիչը, այնպէս որ ու է երեւոյթ պատահելիս՝ թէ մէկը և թէ միւսը անտեղեկ են լինում թէ ինչ տնօրինութիւն կը լինի վերեց:

ԱՆՀԱՄԱՆ ՎՐԻՈՎՄՈՒՆԻՑ

Վայրենի բուշմէնները բարոյագիտական հասկացողութեան հետ ծանօթանալու համար մի ճանապարհորդ հարցնում է նրանցից մէկին, — «Ինչն է վատ և ինչն լաւ»: «Լաւ է, պատասխանում է վայրենին, երբ ես եմ ուրիշին սպանում, վատ է, երբ ուրիշն է ինձ սպանում»:

Բուշմէնի այդ կասկածական պատասխանն էլնք մտաբերում վերջին օրերս, լսելով և կարդալով ամենախիստ յարձակմունքներ Մակիեիկի-Չուբուիի գէմ այնպիսի անձերից և այնպիսի թերթերում, որոնք առհասարակ չեն վրդովվում, երբ լեզու-թիւրված փաստերով և շինծու լուրերով կասկածելի են կացուցանում ուրիշ հասարակական խմբեր, ուրիշ իշխանութեան առաջ կամ հէց նոյն իշխանութեան առաջ՝ միայն ուրիշ տեսակէտից:

Մենք այնքան միամիտ չենք, որ պատասխանենք բուշմէնի նման, բայց նրանից շատ առաջ չենք դնացել բարոյագիտութեան մէջ և միշտ

տրամաբանում ենք նրա մեթոդը, — «վատ է, երբ ուրիշն է դրաւարում մեզ, կեղծ պաշտպան հանդիսանալով ընդհանուր շահերի, լաւ է, երբ մենք ենք նոյնն անում ուրիշների վերաբերմամբ»:

Յաւախն այն է, որ այդպէս տրամաբանողներին թիւը հայերի մէջ մէկ չէ, երկու չէ, այլ ամբողջ լեզնոն: Եւ դժուար է ասել, ո՞րն է աւելի վրդովեցուցիչ, օտարադիքի Չուբուիի վարմունքը (ինչ է նա հայերի համար և ինչ են հայերը նրա համար), թէ այն պատենտաւոր աղբասէրների վրդովմունքը Չուբուիի դէմ, որոնք վայրենու տրամաբանութեանը աւելացնում են քաղաքակրթածի փարիսեցիկութիւնը:

Տ. Յ.

ՆԱՄԱԿ ՊԵՏՐՈՎՍԿԻՑ

Օգոստոսի 1-ին

Յուլիան 30-ին, գիշերվայ 10 ժամին, «Կօրնի-ով» շոգենաւով այստեղ եկաւ Բախարայի էմիրը: Ժողովրդի մեծ բազմութիւն ծածկել էր նաւամատոյցը և մօտակայ բարձրութիւնները. իսկ «Կալկադ Մերկուրի» կայանը գնդեցիկ կերպով լուսավառած էր և դարբարված թարմ ոտներով: Երբ նաւը մօտեցաւ տաղտակամածին, զինուորական երաժիշտները սկսեցին նուագել և բենդալան հրաւառութիւն սկսվեց: Դադստանի նահանգապետի կարգադրութեամբ ընդ առաջ էին դուրս եկել էմիրին թէ զինուորական և թէ վարչական մասերի ներկայացուցիչները. իսկ նահանգապետի ակարգութեան պատճառով, ներկայ էր նրա օգնական գեներալ Տիմոնովը: Պաշտօնական ընդունելութիւնից յետ, էմիրը գիշերային աղօթքը կատարեց և գիշերեց շոգենաւում. շատ քիչերին աշողվեց նրան տեսնել, որովհետեւ ժողովրդին արգելում էին շոգենաւ մտնել:

Միւս օրը, առաւօտեան ժամը 10-ին, շոգենաւը ուղղակի մօտեցաւ երկաթուղու կայարանին, որտեղ արդէն սպասում էր արտակարգ գնացքը, որի շարժում աչքի էր ընկնում արքայական վազոնը էմիրի համար: Նախքան մինչև գնացքը նոր տախտակամած էր կառուցված, ծածկված գորգերով, իսկ երկու կողմը բազմաթիւ զինուորական լույսատու: Վերջապէս ժամը 11-ին շոգենաւից երեսց էմիրը՝ շրջապատված թէ ուսուստիճանաւորներով և թէ իր թիկնապաշտերով, ամենից առաջ գնում էր ինքը էմիրը, զարդարած բենդեկայ և ոսկէման զգեստով, ականակուռ, ոսկէզօծ թուրը կրած և նրա համարձակ գնացքը, ճոխ հագուստը և համակրտկան գէմը յիւրաքանչիւր տիրապետողի տպաւորութիւն էր առնում. ամենից շատագու՛ էին տեսնել նրան, մանաւնդ կանաքը, որոնք շատ բան լսել ու կար-

հելիս՝ ձեռքից չէ փախցնում յարմար առիթը օգտուելու «յաջող» հանգամանքից: Բերնա-յում մեզ պատահեց Գեօրգեանցիի գիւղի երիտասարդ քահանան, որը իր բերանով խոստովանվեց, որ հաց է ցրվել կօղին կէս կօղ տոկոսով...

Այս ընդհանուր տխրադիցիկ երեւոյթների մէջ մենք միմիայն մի միկիթարական բան լսեցինք. մեզ առանձնապէս դուրսեցրեց պատմեցին մի անձնաւորութեան մասին. դա Բերնայի հասարակութեան Բաշ-մուխթար (աւագ տանուտէր) է: Նրա մասին պատմեցին, որ նա ևս հաց է ցրվել չուսեորներին, բայց առաջը որ և է տոկոսի պատահել են դէպքեր, որ նա չքաւորներին հացահատիկ է ընծայել ցանելու համար: Մեր մէջ սակաւաթիւ են այդպիսի անհատները, հետեւապէս և արժանի ամենայն դրովասանքի: Ընդհանրապէս վերցրած մեր հայ հարուստը կարծում է, թէ հարկաւոր է ուրիշին չքաւորութեան մասնել, որպէս զի ինքը առանձնապէս փայլի. նրա ինչ փողին է թէ հայ գիւղացի դասակարգը մշտապէս կիսաքաղցած ապրելով, բաւարար անուշը չը ստանալով, հետզհետէ ալլախեւում է, որ այդ դասակարգի մէջ երեսն են զաւրի վատաւոք, նրանք, թուրակալմ անհատներ, որոնք վաղաժամ մահով հեռանում են երկրից, որպէս բողոք հասարակական անօրմայ կարգերի դէմ:

Քիչ չեն և այնպիսի դէպքեր, երբ վերջին չքաւորութեան հասած մարդը, ստիպված լինելով չեղել օրինականութեան ճանապարհից և իր սրտում ամբարած ունենալով մի կատաղի, անհայտ առեւտրութիւն դէպի իր թշուառութեան նախապատճառը, ինքնադատ օրոշմամբ, անգուժ

դացել էին մայրաքաղաքի թերթերում անցեալ տարի Ռուսաստանում անցկացրած նրա կեանքի մասին:

Մինչև շոգենաւից դուրս գալը, էմիրը անձամբ պարզեաբաշխութիւններ արեց և աստղի շքանշան շնորհեց նահանգապետի օգնականին, քաղաքիս ոստիկանին և «Կալկադ Մերկուրի» կառավարչին: Միտնեա 12 ժամին շրջապայեց քաղաքը և ժամը 2-ին հրաժեշտ տուեց քաղաքին: Ինչպէս յայտնի է, էմիրը գնում է կովկասեան հանքային շրջըր մի շաբաթով, այնուհետեւ կամ Թիֆլիս և կամ Նախաւ է գնալու. նրա հետ են իր բոլոր առաջաւոր մարդիկը—միլիտարները և բարձրաստիճան կրօնաւորները, բոլորը միասին մօտ քառասուն մարդ. իսկ կառավարութեան կողմից նրա հետ էր ուսուսաց ներկայացուցիչը Բախարայում—իսկական խորհրդական Խանով: Երբ գնացքը շարժվեց, երաժշտական խումբը նուագեց: Էմիրը կանգնած պատուհանի առաջ, իր գոհունակութիւնն էր յայտնում գլխի շարժումով:

Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Բաղու, օգոստոսի 2-ին

Խոնարհաբար խնդրում եմ «Մշակ» մէջ դեռ չեղած հետեւել իմ բողոքը:

Անցեալ 1893 թւի նոյեմբերի 27-ին ես Բաղուից ուղարկեցի մէկ խնդիր Նրեանի հայոց կոնսիստորիայի անունով այն մասին, որ բարեհաճեն ուղարկել իմ եղբոր ծննդական վկայականը, խնդրելով չուսացնել, որպէս զի 1894 թ. մայիսին երեխան կարողանայ քննութիւն բռնել և մտնել այստեղի բէալական դպրոցը, որտեղ, ինչպէս յայտնի է, առանց ծննդականի չեն ընդունում. խնդրեմ հետ ուղարկեցի նաև նոյն հասցեով երեք բուրլի թղթադրած և երկու 80-ական կօպկանից մարկաներ: Մինչև մայիս չը ստացայ և ոչ մի պատասխան. նորից մասնաւոր նամակով դիմեցի Կիւրեղ վարդապետ Սրապեանին, որը այնտեղ նախադաճում է և բացատրելով ծննդականի կարեւորութիւնը և երեւալի հասակը, նորից խնդրեցի ուղարկել, կամ պաշտօնական նամակով յայտնել, որ կուղարկվի, որպէս զի այդ նամակը ներկայացնում ուր հարկն է. սակայն այդ նամակի պատասխան էլ մինչև այսօր չը կայ:

Բացի դրանից, նոյն ծննդականի համար գիմեցի Հին-Նախիվան, իմ բարեկամներից մէկին, և խնդրեցի այնտեղի եկեղեցական ատենից, որտեղ եղբայրս ծնված և մկրտված է, եթէ կարելի է, ժամանակ չը կօրցնելու համար, պատճէնը դոնէ վերցնել և ուղարկել:

Դժբաղդաբար, նամակի պատասխանը հետեւալով

վերջնականութեամբ հրեհում է վաշխառուի խոտի, հացի դէգերը, կողոպտում է նրա ինչքը, երեւմն և սպանում է նրան:

Միւս կողմից վաշխառուի զաւակները պատուաւոր դրամի առատ գէղերը սակաւ առ սակաւ սկսում են հալկցնել զանազան անբարոյական տեղերում, կամէլիաների հետ, գիւնեւորներին մէջ, փչանում, անբարոյականանում և աշխարհ բերում մահվան սաղմը իրանց երակներում կրող փերուն էակներ, որոնք թիթեւ քաւուցանգամ տատանվում, հիւժմվում և գերեզման են մտնում: Ուրեմն թէ հարստահարողը և թէ հարստահարվածը այդ գործողութիւնների միջից դուրս են գալիս վնասով, մի կողմից բանտ, աքսոր, տաժանակիւր աշխատանք, միւս կողմից անբարոյականացրած մի սերունդ: Չարագործութեան վրա՛ հիմնված գործը պատկւում է չարագործութիւնով և ամբողջ սերունդներ երկար տարինուրով քաւում են պապերի մեղքը...

Մեր կարծիքով, կառավարութիւնը արդեւելով դրամական գործառնութիւնների մէջ 120/0-ից աւելի վեր առնելով, բնականաբար, չէ կարող թոյլ տալ, որ կենսական ամենամանրաբեշտ պիտոյքի հացի գործառնութիւնների մէջ այդպիսի դիզոմիներ կատարվեն, այդպիսի անուր տոկոսներ առնվեն: Ի պատիւ կարսի նահանգապետի պէտք է ասել, որ նա հալածում է վաշխառուներին. հարկաւոր է միայն հիշել տեղեկութիւն տալ նրան՝ կատարվող չարքները մասին:

Խ. Մառանկոզեանց

Թշուառ հայրենակցներն ցոյց տանք կարեկցութիւն, գործարկենք այն միջոցները, որով մասամբ թեթեւացրած կը լինենք նրանց անպատմելի վիշտը և կատարած մեր մարդկային պարտքը»:

«Թափրկել բողոքականների աղայոց դպրոցի վարչութիւնը որոշել է այլ ևս լուսաւորչական ուսուցիչ չը պահել: Մեզ այս լուրը տարօրինակ է թւում, մանաւանդ այն պատճառով, որ մեր ուղարկած մի քանի թղթակցութեանց մէջ յայտնված էր այն կարծիքը՝ որպէս թէ այդ դպրոցում յառաջագիւտ ուղղութիւն է սկսել տիրել: Ինչպէս համաձայնեցնել այս երկու հակասութիւնները»:

«Չը կարողանալով երկար դիմանալ տաճկա-Հայաստանում տիրող անտեսական անողորմ պայմաններին՝ Աղբակից Սալմաստ են գաղթել հարկւր քսան տուն անտէր, անտերունջ, մերկ և քաղցած ընտանիք: Կառավարութիւնը տեսնելով գաղթականների անտանելի վիճակը, ցոյց տուեց իր ողորմածութիւնը՝ ընտանեկան Նրանց Սալմաստի զանազան հայաբնակ գիւղերում»:

«Խոյի Սէլապար գիւղում անմիջ դրպարտութիւնների դէմ գնալով նոյն գիւղի տէր Ստեփան քահանայ, խիստ զանախոժիւ է մի քանի գիւղացիների հետ միասին: Նրանց առել են 350 թուան տուգանք: Տէր-հայրը մի քանի գիւղացիների հետ գնացել է Թալիւղ բողոքելու ուր հարկն է»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Միլանից հեռագրում են, որ իտալական մի-նիստ-բանտաբան հրկիւղի ամեն օր սպանալի նամակներ է ատանում անարխիստներին:

—Բրազիլական կառավարութիւնը արգելում է ափ իջնել իտալական անարխիստներին Բրազիլիայում:

—Լոնդոնից հեռագրում են, որ Չինաստանում առանձին հարկ է օրոշված պատերազմական ծախսերի համար: Կապոնական լրագրիւններն արգելված է որ և է տեղեկութիւններ տպել պատերազմի մասին, բացի պաշտօնական տեղեկութիւններից:

—Անգլիական «London Gazette» պաշտօնական լրագրում տպված է մի կիսապաշտօնական տեղեկութիւն, որից երևում է, որ կառավարութիւնը վճել է չէղձ միալ չինա-կապոնական պատերազմում:

—Հոմբից հեռագրում են, թէ իտալիան պաշտօնապէս յայտարարել է, որ ինքն չէղձ զինք կը բռնի չինա-կապոնական պատերազմում:

—Բէլգրադից «Times» լրագրին գրում են հետեւեալը. «Մի քանի ժամանակից լուրեր են տարածվում, որ օգոստոսի 2-ին (14-ին), Ալեքսանդր թագաւորի ծննդեան օրը, քաղաքական մի քանի անսպասելի փոփոխութիւններ կը լինեն: Մի քանիսներն ասում են, թէ սերբիական երկու թեմեր կը հաստատվեն Ուսկիւբում և Պրեզբուրում, և միտրոպոլիտ Միլանիլը թէ Սերբիայում և թէ Թիւրքիայում ու Աւստրիայում ապրող բոլոր սերբիացիների պատրիարքի աստիճան կը ստանայ. ուրիշները պատում են, որ ներումն կը չնորսվի այն բոլոր անձանց, որոնք մեղադրվում են հակաթաւադարական դաւադրութեան մէջ: Ամենահաւանական համարվում է ներումն չնորսելու մասին տարածված լուրը: Իսկ Հին-Սերբիայում և Մակեդոնիայում սերբիական թեմեր հաստատելու և միտրոպոլիտ Միլանիլին պատրիարքական աստիճան տալու լուրը հիմք չունի, որովհետեւ այդ միտքը իրագործելու համար նախապէս անհրաժեշտ է Թիւրքիայի և Աւստրիայի համաձայնութիւնը ստանալ: Աւստրիան դան է ոչինչ չա՛հ չունի պաշտպանելու Սերբիային այդ ուղղութեամբ»:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՈՒԹԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՎՈՐԳ, 30 օգոստոսի: Պետերբուրգի բորսա.—Կալուսական բանկերի գրական թղթեր թիֆլիսի 6⁰/₀—101³/₄, 5⁰/₀—100¹/₂, Բաթումի 6⁰/₀—102, 5⁰/₀—100¹/₂, Թիֆլիսի քաղաքային կրէդիտական ընկերութեան արժէթղթեր 98³/₄ ր.—Ներկէ կեսօրին Մեծ Խլտան Ալեքսանդր Միլայ-րովիչ Ամուսնու հետ ճանապարհ ընկան կրիմ «Ախոօր» կալուածքը:

ՀՈՍՄ, 30 օգոստոսի: Ոստիկանութեանը առ զվեց զանեկ պայթուց գործիքներ պատրաստող

անձնաւորութիւններն Հոմաում. կալանաւորված են 7 մարդիկ. նրանց մօտ գտան մէկ գործիք: Կալանաւորվածները կը դատվեն անարխիստների դէմ հրատարակած նոր կանոններով:

ՊԵՏԵՐՈՎՈՐԳ, 4 օգոստոսի: Երէկ երեկոյան Պետերսօֆից տեղափոխվեցին Կրասնոե-Սելո թաւադար Կայսրը և Թագուհի Կայսրուհին Մեծ Խլտան Միլայի Ալեքսանդրովիչին, անգլիական իշխանահայերի, յունական արքայադուստրի և Դանիայի պրինցի հետ միասին: Բարձրագոյն թոյլ է տրված մտցնել Ռուսաստանի սահմանները պարսկական արծաթ դրամ—դրամը:

ԼԻՍՆ, 4 օգոստոսի: Այսօր առաւօտ գլխատեցին Կազերիին: Ցանցաւոր աստիկ կուռն էր, երբ նրա գլուխը դնում էին գլխաւորի տակ:

ՍՈՅԻՆ, 4 օգոստոսի: Կօրուրդեան պրինցի Բոլգարայի վարչութիւնը ստանձնեցու երէկվան տարեդարձի առիթով, ընդհանուր ներումն է չը-նորսված քաղաքական յանցաւորներին: Ներումն չէ չնորսված միայն Կարալէովին, որը քաղաք-ձակապէս հրաժարվեց ինքրիկ դրամ մասին: Ար-ձակված են բանտից նոյնպէս 245 անձինք, որոնք բանտարկված էին սովորական յանցանքների համար:

ԼՕՆԻՌՆ, 4 օգոստոսի: Անցեալ շաբաթ ծո-վային պատերազմ տեղի ունեցաւ չինական և եւպոնական պատերազմական նաւերի մէջ: Լուր է պտտւում, որ չինական նաւերը պարտութիւն կրեցին:

Խաղաղի՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄՆԱԳԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ ԵՆ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներն ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ—11—12 Ժ. վիրաբու-ժութեան և վէներական (սիֆիլիս) հիւանդու-թիւնների:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 Ժ. աչքի և նեար-դային հ.

Կ. Գ. ԲՈՒԴՆԻՍԿԻ—10—11 Ժ. ներքին, երե-խաների և կանանց հ.

Ա. Գ. ԳՈՐԻՊՈ—1—11/2 Ժ. ականջի, կոկորդի, և քթի.

Կին-բժիշկ ՏՈՒՐՈՎԻԻ—12/2—1 Ժ. կանանց ց. Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—11/2 ներքին և երե-խայոց հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՐԻՊՈ—6—7 Ժ. Սիֆիլիսի և մէղի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ—7—71/2 Ժ.

Ի. Ե. ՔԱՐԱՅԻՈՒՄ—7—71/2 ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբ-թի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՐԻՊՈՎԻԿԻԱՆ և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէղի, խիւր, ա-րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոմիտէի) ց օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցում ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԿԻ ՀԻՄՆԱԳԱՆՈՑ:

Հիւանդանոցի վերաբեռնող բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ:

(№ 72)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

և շուտով լոյս կը տեսնէ

ԼՈՒՄԱՅԻ

„ԳԱՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ“

վերնագրով վէպը:

(№ 84)

2—3

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱՔԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտարարում է, որ հարկաւոր են վերցնել զբաղ-լոյցների համար մի աւագ ուսուցիչ ցէն-գով, ուսուցիչներ և ուսուցչուհիներ: Ցան-կացուցները պէտք է դիմեն Կարս, վերցի-շաղ զարդների հոգաբարձութեանը:

(№ 89)

1—2

Հայոց կրթական

„ՍԷՐ“

Ընկերութիւնը թաւրիգում բաց է անում ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑ: Սրանով յայտնում է, որ կօմիտետով ընդունում է վաճառելու դա-սաղքեր, զրքեր, բրօշուրներ, պատկերներ և ամեն տեսակ ուսումնարարական առար-կաներ:

Գիմե՝ TAVRIS (Perse) Comité d'Inst-ruktion arménienne „SER“

(№ 81)

4—5

Թիֆլիսի Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԻԱՅ ԵՐԿԳԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ Վարչութիւնը յայտարարում է, որ վերաբնութիւնները և աշակերտութիւնների ընդունելութիւնը սկսվում են օգոստոսի 20-ից:

Նոր աշակերտութիւն մտնելու համար պէտք է ա, խնդիր տալ վարչութեան անունով, Բ, ներկայացնել մետրիկական և Գ, ծաղիկ վկայականներ:

(№ 89)

1—4

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ձեռնարկելով բանա-լու Թիֆլիսում ընկերութեան

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, որի մէջ պէտք է մտնեն բոլոր լոյս տեսած հայերէն գրքերը և լրագրիւնները, նոյն-պէս և ուրիշ ընդունելով տպագրված ընտիր երկաւորութիւններ՝ կովկասագիտութեան և արեւելագիտութեան վերաբերեալ, սրանով դիմում է այն անձանց, որոնք կը ցանկա-նային իրանց մատենադարանները նուիրել կամ վաճառել ընկերութեան՝ բարեհաճեն զրքերի ցուցակները և իրանց պայմաններն ուղարկել ընկերութեան խորհրդին մինչև օգոստոսի 30-ը:

(№ 89)

1—5

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

Պ-րդ տարի.

Օգոստոսի 22-ից աշակերտներ ընդունվում են՝ գիշերօթիկ, ցերեկօթիկ և երթեկէկ, պատրաստվելու պետական բոլոր դպրոցները մտնելու համար:

Անհրաժեշտ տեղեկութիւնները և ծրագիրը կարելի է ստանալ ամեն օր առաւօ-տեան 8 ժամից մինչև 1 ժամը, իսկ երեկոյան 5—8 ժամը: Հասցէ՝ Тифлисть, въ Соло-лакахъ, Садовая улица, д. Шадинова, № 38, противъ Гановской.

(№ 89)

1—5 (6, 11, 13, 17, 27)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՐՀԵՍՏԱԻՈՐԱՅ ԴՊՐՈՑԸ մտնելու համար պահանջվում են 13¹/₂-ից մինչև 18 տարեկան հասակ, ամուր կազմուածք և գիտութիւն տարրական դպրոցի դասընթացի ծաւալով:

Դպրոցում աւանդվում են հետեւեալ առարկաները՝ փականագործութիւն, ա-տաղձագործութիւն, ձուլելու արհեստը և դարբնութիւն:

Դիւրեկտօրի անունով գրված խնդրի հետ միասին ներկայացվում են՝ մետրիքա-կան վկայականը (և ոչ թէ պատճէնը) և ծաղիկ պատուաստելու վկայականը:

Խնդիրները ընդունվում են ամեն օր 8-ից մինչև 4 ժամը: Ընդունելութեան քրո-նութիւնները կը կատարվեն օգոստոսի 25-ին:

(№ 89)

1—3

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթու-թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական հստեութիւն, 2) Առեւ-տրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-յին), 4) Թուաբանութիւն համարիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղադրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլոյակով, Ալեքսանդր ֆրիդմանի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նազարեայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովառօնների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянц.

№ 62

18—32

Ի. Ե. Ա. ԲՐՈՆ ՅՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Յանձն է առնում ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԱԿԻ և ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվա ընթացքում, ուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է դասարանական և արդիւնաբերական հաստատու-թիւնների հաշիւները և մատնաները, ընտում, փակում, բանում, և կազմում է առեւ-տրական մատնաներ, ընդունում է առեւտրական մատնաների զանազան թիւրիմացու-թիւնների ընտումները և բացատրութիւնը:

Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ձեռի ՏԵՂԵ-ԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԴՊՐՈՑԻ ԸՆԹԱՅԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՕՆԱՌՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ: Մա-տնաներ պահելու համար վերցնում է տարեկան 100 ռուբլի և աւելի: Հասցէ՝ Елизаветин-ская, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում:

Ուսուցանում է:

Հ Ա Շ Ի Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Ա Ր Ա Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Վճար { Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
Արագագործութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ
Պարապմունքների լինում են ամեն օր, երկու ժամկալ ընթացքում: Առա-ջագիւտ պարապմունքների համար ՎԱՅԱԿԱՆՆԵՐ ԲԵՐԱԿԱՆ զարդի դիւրեկտօրից և ուրիշ անձերից:

(№ 16)

(2) 22—100

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՇՏԵՍ ԵՒ ՎԱՅԱՌԱՏՈՒՆ գեղերի, մարմին գեղեցկացնող և հոտաւետ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և անտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:

(№ 67)

93—100 (Կ. 2.)